

ԲԵՆՔ ԿԱՐԳԱՊԱՀ ՅԵՎ ԳԻՏԱԿԻՑ



ՀԱՅՐԱՍ

1938

ՅԵՐԵՎԱՆ

891.715

L-S6

Ա/

ԳՐՈՂԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

8232-53

891.715 Միջազգային
գործառական և գի-
տական

Տպ 11-	285	11/10.50

ՀԻՆԵՐՔ ԿԱՐԳԱՊԱՀ

ՈՒ

Գ Ի Տ Ա Կ Ի Ց

Նկարները

ԳՈ. ԳՈ.ՍՊ.ՐՅԱ.ՆԻ

Գ Ի Տ Ա Կ Ի Ց
ՀԱՅԵՆՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱԳԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻ
ՑԵՐԵՎԱՆ

1988

ՍԻՐԵԼԻ ՊԻՈՆԵՐՆԵՐ ՅԵՎ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐ.

Դուք Ստալինյան դարաշրջանի ամենայերջանիկ սերունդն եք, վորովիեսու շրջապատված եք մեր հարազատ բոլշևիկյան կուսակցության, Խորհրդային կառավարության և ժողովուրդների մեծահանճար առաջնորդ, յերեխաների ամենասիրելի բարեկամ, մեր հայր և ուսուցիչ ընկեր Ստալինի անսահման հոգատարությամբ:

Չեզ համար ստեղծված են սովորելու և ստեղծագործական աշխատանիքներ կատարելու բոլոր հնարավորությունները:

Ամեն տարի կառուցվում են նորանոր դպրոցական գեղեցիկ շենքներ, պիոներական տներ, ակումբներ, կահավորվում են դպրոցական կարինենեներն ու լաբորատորիաները, հսկայական գումարներ և տրամադրքի գումարները, աշխատանիքների կազմակերպման համար:

Մեր կուսակցությունը, կառավարությունը և Խենինյան կոմյերիտմիությունը ձեռնարկել ու ձեռնարկում են բոլոր միջոցառումները, վորպեսզի դուք դառնաք մեր սոցիալիստական մեծ հայրենիքի առողջապահական աշխատանիքների կազմակերպման համար:

Սակայն ձեր շարքերում կան այնպիսիները, վորոնք յերբեմն մոռանում են իրենց պիոներական բարձր կոչումը, խորհրդային դպրոցի աշակերտի պարտականությունները և այս կամ այն անբնույթատրելի արարքով վարկարեկում են քե՛ իրենց, քե՛ իրենց ծնողներին և քե՛ դպրոցն ու պիոներ կազմա-

ՅԻԼΙՕՏԵԿԱ
Ակադեմի Հայկ
У Р С Р

30103906



3232-53

կերպությունը։ Նրանք մոռանում են, վոր մեր դեկա-
վարները, մեր յերկրի հերոսները, գործարանների ու
սոցիալիստական դաշտերի ստախանովականները հա-
մառ աշխատանքով, կարգապահությամբ և նվիրվա-
ծությամբ են անվանի մարդիկ դարձել։

Միշտ հիշեցեք, վոր անկարգապահությունը,
կոպտությունը, խուլիգանությունը, անկուլտուրա-
կանությունը, հասակավորներին չհարգելը, հատուկ
չեն խորհրդային դպրոցականներին ու պիոներներին։

Ոգնեցե՛ք, ուղեցեք ձեր ընկերներին, վորպեսզի
նրանք որինակելի պիոներներ և դպրոցականներ լի-
նեն։

Յեղե՛ք կարգապահ տանը, դպրոցում, փողոցում
և նույնը պահանջեցե՛ք ձեր ընկերներից։


Պայքարեցե՛ք ամրապնդելու բոլշևիկյան կար-
գապահությունը դպրոցում, զոկատում։

Պայքարեցե՛ք գիտելիքների յուրացման և ուսման
գերազանցիկներ դառնալու համար։

Պայքարեցե՛ք Լենինի-Ստալինի գործի համար։

ՀԱԿԵՄ ԿԵՆՏԿՈՄ

ՀԱՅԿ ԽՍՀ ԼՈՒԺԴՈՂԿՈՄՍ



Ս. ՍՏԱԼԻՆԻ

Յ Ե Ր Ե Խ Ա Ն Ե Ր

Ծեր Սուլեյմանից ձեզ հազար վողջույն,
Ծաղկում ե կյանքը մեր, յերեխանե՛ր,
Ձեզ համար յերկրում նոր այդ ե բացվում,
Նոր խինդ ե բերում ձեզ, յերեխանե՛ր։

Վանեցեք ձեզնից անպետք ծուլություն,
Յերգով դիմեցեք զուք որը արթուն.
Թող յեղնիկի պես արեվը խնդուն
Դիմավորի ձեզ, ջան յերեխանե՛ր։

Բաց ե գրքի պես՝ կյանքում ամեն ինչ.
Սովորեցեք դուք լող, վազք ու թոիչք,
Աստղերի ցոլքն ու ծովը հմայիչ
Միշտ գրավել են ձեզ, յերեխանե՛ր։

Լայն ե յերկիքը մեր ու ընդարձակ,
Անհուն խինդ ունի, գիրք մեծաքանակ։
Կուզե՞ք ձեռք բերել. — պետք ե շարունակ
Սովորեք անդուլ, իմ յերեխանե՛ր։

ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ — դարուն ե խնդուն,
ԶԵՂ սնուցանող յերկիրը սիրուն,
ԹՈՂ փըթթի՛, դառնա ուժեղ, զվարթուն,
ՅՈՒՍ' ալմասի պես, յերեխանե՛ր:

Թարգմ. Մ. ԴԱՒՐԳԱՑՅԱՆ



ՏՈԼՅԱ ՊԵՐԵԼԻԳԻՆ

ԸՆԿԵՐԱԿԱՆ ԽՈՐՃՈՒՐԴ

Առաջ յես սիրում եյի նստել տրամվայների վոտ-
նակներին վոչ թե այն պատճառով, վոր փող չկար
(10 կոպեկ միշտ կճարվի), այլ ուղղակի թվում եր՝
ավելի հետաքրքիր ե վոտնակի վրա, թեալետ մի քիչ
ասրափելի:

Յերեխաներն անգամ ինձ հարգում եյին այդ
բանի համար և յերոս եյին համարում: Բայց իմ «Հե-
րոսությունը» յերկար չտեսեց:

Մի անգամ, մենք յերեխաներով ցատկում եյինք
մի տրամվայից մյուսի վրա: Յես, ինչպես միշտ, ա-
ռաջավոր եյի: Հանկարծ— չեմ հիշում, թե այդ
ինչպես պատահեց, — յես պոկվեցի վոտնակից և ըն-
կա անիվի տակ:


Այժմ կտրել են իմ յերկու վոտները:

Յես ի հարկե, կորած մարդ չեմ, յես կսովորեմ և
կկարողանամ գառնալ դասատու, գիտնական կամ ին-
ժեներ: Բայց չե՞ վոր յես առաջ յերազում եյի դառ-
նալ ողաչու, կամ չողենավի կապիտան, իսկ այժմ
այդ արդեն չի լինի: Յես չեմ կարող նույնպես և սահ-
մանապահ լինել, չեմ կարող կանգնել դիրքում չան
չետ և հետախուզել թշնամուն...

Յես ուղում եմ նախազգուշացնել այն յերեխա-
ներին, վորոնք մինչև այժմ կպչում են տրամվայի
վոտնակներին ու բուֆերներին:

Շատերը կասեն ինձ, քանի վոր ցատկել չգիտեյիր,
չցատկեյիր: Բայց յես ևս այդպես եյի մտածում այն-
քան ժամանակ, քանի դեռ չեյի ընկել տրամվայի տակ:

«Զադորսկի» մանկատան 4-րդ դասարանի աշակերտ
10 հունվարի, 1938 թ.



ԽՍՀ Միուրյան հերոս Վ. ԶԿԱԼՈՎ

ԱՄԵՆ ՄԻ ՀԱՄԱՐՁԱԿՈՒԹՅՈՒՆ ԱԶՆԻՎ ԳՈՐԾ ԶԵ

«Պիոներսկայա Պրավդայում» յես կարդացի Տոլյատի Պերելիդինի նամակը, մի տղայի, վորի հետ դըժքախոսություն եր պատահել:

Տոլյատի Պերելիդինը գրում է հերոսության մասին: Նա և նրա ընկերները իրենց կտրիճներ ելին համարում, յերբ տրամվայի գնալու ընթացքում ցատկում ելին վոտնակների վրա և կախ ընկնում նրանցից:

Նրանք կարծում ելին, վոր «համարձակությունը ազնիվ գործ ե»: Բայց անմիտ համարձակությունը վոչ մի ժամանակ հերոսության կոչում չի վաստակել և չի վաստակում:

Իսկական խիզախ մարդը վոչ մի ժամանակ անմտորեն, աննպատակ, առանց անհրաժեշտության իրեն վտանգի չի յենթարկում:

Յերբ Միխայիլ Վոդոպյանովը թուավ չելցուակինյաններին ազատելու, ահա՛ այդ խիզախություն եր: Միթե այստեղ համարձակություն չկար. ի հարկեկար: Ինքնաթիուը մառախուղի մեջ կարող է մոլորել, սառցակալել, մոտորի փչացման դեպքում

կարող է հարկադրված վայրեջք կատարել և ջարդվել սառցակույտերին ընդհարվելուց:

Ահա՛ այդ՝ խիզախ և ազնիվ, բայց մտադրված և հիմնավորված համարձակություն եր:

Մարդը վտանգի յենթարկեց իր կյանքը, ուրիշների կյանքը փրկելու համար:

Նա այդ քայլը կատարեց վոչ թե նրա համար, վորպեսզի զարմացնի աշխարհը, այլ նրա համար, վոր կատարի իր պարտքը:

Ահա՛ յերբ յերեխաները ցատկում են մի տրամվայից մյուսը, ձեռք մեկնելով բռնատեղերին, յերբ նրանք այս դեպքում վտանգում են իրենց կյանքը, այդ հերոսություն չե, այլ ուղղակի հիմարություն:


Դուք ուզում եք ձեր մեջ դաստիարակել արիություն, ճարպիկություն, հնարագիտություն, այդ շատ լավ է: Այդ ձեզ պետք կդա յերբ դառնաք խորհրդացյին յերկրի հասունացած քաղաքացիներ:

Մեր հայրենիքին հարկավոր են քաջարի մարդիկ: Բայց արիությունը ձեռք ե բերվում վոչ թե տրամվայի վոտնակի վրա:

Դրա համար կան ավելի լավ միջոցներ: Պարապեցե՞ք Փիզկուլտուրայով, սղղացե՞ք չմուշկներով, սահեցե՞ք սահնակներով, կրակեցե՞ք, լողացե՞ք և այլն: Իսկ տրամվայի վոտնակը — դա վոչ թե հերոս դառնալու, այլ հաշմանդամ դառնալու մի ուղի յե:

Վոչ մի տեղ չկա այնպիսի անկանոն յերթեեկություն, ինչպես մեզ մոտ Մոսկվայում: Այդ բանից տուժում ե մեր տրանսպորտը: Մեր մեքենաները գնում են ավելի դանդաղ, քան մյուս յերկրներում: Չի կարելի զարգացնել նորմալ արագությունը, յերբ փողոցային յերթելեկությունը անկանոն ե: Բացի այդ, դա սաստիկ ցնցում ե մեքենաների և տրամվայների դեկավարների ջղերը:

Փողոցում յերեխաները կարող են իրենց մեջ



ԽՍՀ Միուրյան հերոս Վ. ԶԿԱԼՈՎ

ԱՄԵՆ ՄԻ ՀԱՄԱՐՁԱԿՈՒԹՅՈՒՆ ԱԶՆԻՎ ԳՈՐԾ ԶԵ

«Պիոներսկայա Պրավդայում» յես կարդացի Տոլյատի Պերելիդինի նամակը, մի տղայի, վորի հետ դըժքախտություն եր պատահել:

Տոլյատի Պերելիդինը գրում ե հերոսության մասին: Նա և նրա ընկերները իրենց կտրիճներ ելին համարում, յերբ տրամվայի գնալու ընթացքում ցատկում ելին վոտնակների վրա և կախ ընկնում նրանցից:

Նրանք կարծում ելին, վոր «Համարձակությունը ազնիվ գործ ե»: Բայց անմիտ համարձակությունը վոչ մի ժամանակ հերոսության կոչում չի վաստակել և չի վաստակում:

Իսկական խիզախ մարդը վոչ մի ժամանակ անմտորեն, աննպատակ, առանց անհրաժեշտության իրեն վտանգի չի յենթարկում:

Յերբ Միխայիլ Վոդոպյանովը թռավ չելյուսկինյաններին ազատելու, ահա՝ այդ խիզախություն եր: Մի՞թե այսեղ համարձակություն չկար. ի հարկե կար: Ինքնաթիռը մառախուղի մեջ կարող ե մոլոր վել, սառցակալել, մոտորի փչացման դեպքում

կարող ե հարկադրված վայրեջք կատարել և ջարդվել սառցակույտերին ընդհարվելուց:

Ահա՝ այդ՝ խիզախ և ազնիվ, բայց մտադրված և հիմնավորված համարձակություն եր:

Մարդը վտանգի յենթարկեց իր կյանքը, ուրիշների կյանքը փրկելու համար:

Նա այդ քայլը կատարեց վոչ թե նրա համար, վորպեսզի զարմացնի աշխարհը, այլ նրա համար, վոր կատարի իր պարտքը:

Ահա՝ յերբ յերեխաները ցատկում են մի տրամվայից մյուսը, ձեռք մեկնելով բռնատեղերին, յերբ նրանք այս դեպքում վտանգում են իրենց կյանքը, այդ հերոսություն չե, այլ ուղղակի հիմարություն:


Դուք ուզում եք ձեր մեջ դաստիարակել արիություն, ճարպիկություն, հնարագիտություն, այդ չատ լավ ե: Այդ ձեզ պետք կդա յերբ դառնաք խորհրդային յերկը հասունացած քաղաքացիներ:

Մեր հայրենիքին հարկավոր են քաջարի մարդիկ: Բայց արիությունը ձեռք ե բերվում վոչ թե տրամվայի վոտնակի վրա:

Դրա համար կան ավելի լավ միջոցներ: Պարապեցե՛ք Փիղկուլտուրայով, սղղացեք չմուշկներով, սահեցե՛ք սահնակներով, կրակեցեք, լողացեք և այլն: Իսկ տրամվայի վոտնակը — դա վոչ թե հերոս դառնալու, այլ հաշմանդամ դառնալու մի ուղի յե:

Վոչ մի տեղ չկա այնպիսի անկանոն յերթեեկություն, ինչպես մեզ մոտ Մոսկվայում: Այդ բանից տուժում ե մեր տրանսպորտը: Մեր մեքենաները գնում են ավելի դանդաղ, քան մյուս յերկներում: Չի կարելի զարգացնել նորմալ արագությունը, յերբ վողոցային յերթելեկությունը անկանոն ե: Բացի այդ, դա սաստիկ ցնցում ե մեքենաների և տրամվայների զեկավարների ջղերը:

Փողոցում յերեխաները կարող են իրենց մեջ




10

դաստիարակել այնպիսի վորակ, վորը միշտ անբաժան է համարձակությունից։ Այդ ամուռ կարգապահությունն է։

Պետք է սովորեցնեք ձեզ, պետք է հարկադրեք ձեզ կանոնավոր գնալ փողոցներով, պահպանել փողոցային յերթեվեկության կանոնները։ Այդ բոլորովին դժվար բան չե, բայց շատ ոգտավետ վարժություն է կարգապահության զարգացման համար, վորը յուրաքանչյուր խիզախ մարդու անհրաժեշտ հատկությունն է։

25 հունվարի, 1937 թ.

11



ԲԱՅ ՆԱՄԱԿ ԻՄ ԸՆԿԵՐՆԵՐԻՆ

1935 թ. մարտի 8-ին, կանանց միջազգային տոնն եր. ինձ և մորս (վոր աշխատում եր Քաղխորհ հըրդում) պարգևատրեցին հագուստով:

Այդ որը ուրախությանս չափ ու սահման չկար: Յես ինքը մորս տալ միայն 20 կոտեկ, վորպեսզի նստեմ արամվայ:

Մայրս չմերժեց: Յես վերցրի ու վագեցի դեպի № 2-րդ արամվայի վագոնը: Կյանքումս յերկրորդ անգամն եյի արամվայ նստում, դրա համար ել հետաքրքրությանս չափ ու սահման չկար:

Վագոնն ինձ հասցրեց կայարան, սակայն չե վոր յես գործ չունեյի կայարանում, գնացել եյի ման դալու: Մտածում եյի ինչ անել:

Վոտքով չեյի ուզում վերապառնալ: Դրա համար վորոշեցի առանց փողի նստել:

Ամեն մի կանգառը հասնելիս՝ սիրտս արագությամբ խփում եր: Գալիս ե ահա տոմսեր ստուգողը: Նա մոտեցավ ինձ, սակայն այլես ինձ վագոնում չտեսավ: Արագ գնալու ժամանակ յես ինձ նետեցի վագոնից: Յես ուշքս կորցրել եյի, չգիտեյի վորտեղ եմ գտնվում: Միայն հաջորդ որը զգացի, վոր պակած եմ հիվանդանոցում:

Յերկրորդ վագոնի առաջին անիվները անցել եյին իմ աջ վոտքի թաթի վրայից և բաժանել իմ մարմնից: Վոտքս կորեցին:

Յերեք ամիս հիվանդանոցում մնալուց հետո, ինձ տուն բերին: Այժմ յես չեմ կարողանում անգամ վայտերի ոգնությամբ ման դալ:

Իմ ընկերները արգեն դպրոց են գնում, իսկ յես զրկված եմ այդ բախտավորությունից:

Ինձ հետ պատահած այս գժբախտ դեպքի մասին պատմելով ձեզ, ցանկանում եմ, վոր դուք ել ինձ նման անզգուշության և անմիտ զբոսանքի զոհ չդառնաք:

Դուք պետք ե ճիշտ կիրառեք տրամվայների և ավտոների յերթեվեկության կանոնները:

Յերբեք վագոն չմտնեք առաջին դռնից, չթռչեք գնալու ժամանակ, չկպչեք տրամվայի և ավտոների պոչից: Յեթե փող չունեք՝ տրամվայ չնստեք, խաղ չանեք փողոցների մեջտեղում, և այն ժամանակ դուք յերբեք ինձ նման գժբախտության չեք հանդիպի: Յես հուսով եմ, վոր բոլոր դպրոցականները քննության կառնեն ինձ հետ պատահած գժբախտ դեպքը և կը պահպանեն յերթեվեկության կանոնները:

Զերմ բարեներով ձեր պատանի ընկեր՝
ԳՐԻԳՈՐ ՄԱՆՏՈՅԱՆ

Ի՞՞ՆՉՆ Ե ԼԱՎ ՅԵՎ Ի՞՞ՆՉԸ ՎԱՏ

Մի պատլիկ
Ժիր յերեխա
Յեկավ հոր մոտ
ու ասավ
— Ասա՛, Հայրիկ,
ասա, տեսնեմ,
Ի՞նչն ե վատը,
ինչը՝ լավ։
Գաղտնիք չունեմ
յես ձեզանից,
Ականջ արեք,
յերեխեք,
Այդ Հայրիկի
պատասխանը
Կասեմ այստեղ
յես մեկմեկ։
Յերբ քամին ե
փչում, ճչում,
Կարկուտ թափում
հորդառատ,
Ա՛յ, այդ որը
համարսվում ե
Զբոսանքի
համար վատ։
Անձրելն անցավ.
արեգակի

Վառ շողերը
փայլեցին։
Ա՛յ, լավ որ ե
զբոսանքի
թե փոքրիկին,
թե մեծին։
Թե յերեխան
կեղտու ե, սեվ,
Գիշերվանից
եւ խավար,
Դե, պարզ ե վոր
դա չատ վատ ե,
Մորթի համար
վնասակար։
Թե յերեխան
սիրում ե միշտ
Ոճառ, փոշի
ատամի,
Այդ յերեխան
վարվում ե ձիչտ,
Այդ շատ լավ ե,
գովելի։
Թե կովարար
ու չար տղան
Ծեծում ե մի
փոքրիկի,
Յես այդպիսի
յերեխային
Գրքում չեմ հիշի
լուկի։
Ա՛յ, սա ասում ե
բարձրաձայն.
«Քեղնից փոքրին
չծեծես»։
Ինչ լավիկն ե
այդ յերեխան,

Ապա մի լավ
 նայի՞ր, տե՛ս:
 Յեթե տղան
 պատռել ե իր
 թե՛ գնդակը,
 թե՛ գիրքը,
 Հոկտեմբերիկներն
 ասում են
 Ինչ վատ ե այս
 փոքրիկը:
 Թե սիրում ե
 աշխատանքը,
 Միշտ կարդում ե
 յերեխան,
 Ապա ասում են
 ամենքը.
 «Ի՞նչ լավիկն ե
 այս տղան»:
 Այս պստիկը
 սեզ ազոավից
 Վախեցել ե
 ու փախչում.
 Սա չատ վատ ե,—
 Այդ յերեխին
 Վախեոտ տղա յենք
 կանչում:
 Իսկ այս տղան,
 թեև պստիկ,
 Ազոավից չի
 վախենում:
 Քաջ յերեխան
 միշտ ել լավ ե,
 Պետքական ե
 մեր կյանքում:
 Սա ել մտել ե
 յեխի մեջ,

8232-53

Կեղտոտել ե
 չապիկը,
 Այդ տղայի
 համար կասենք,
 Վոր փնթի յե
 փոքրիկը:
 Ով սրբում ե
 վոտնամանը,
 Կրկնակոչիկն ե
 մաքրում,
 Այ, այդպիսի
 յերեխային
 Մենք միշտ լավ ենք
 համարում:
 Այս բոլորը
 թող լավ հիշե
 Ամեն տղա,
 իմանա,
 Վոր մեծանու
 Խոզ կդառնա,
 Թե խոզուկ ե
 յեղել նա;
 Յել հեռացավ
 տղան ուրախ
 Ու իր մտքում
 վորոշեց.
 «Միշտ ել լավ-լավ
 բաներ կանեմ,
 Վատ չեմ լինի,
 յերբեք յես»:



Հ. ՀԱՅՐԱՊԵՏՈՒՄ

ԽՈՍՏՈՒՄԸ ԶԿԱՏԱՐԵՑԻ

1.

Աշնան մի դեղեցիկ առավոտ եր:
Քաղաքային այգու ծառերը դեղին, կանաչ ու
կարմիր շորեր եյին հազել:

Ծառայողները, վորի ձեռքին պորտֆել, վորի
կոնատակին թղթապանակ, կին ու տղամարդ, ծեր
ու յերիտասարդ, շտապ քայլերով անցնում եյին աս-
ֆալտած մայթերով։ Մայթի կողմից քչքչալով անց-
նում եր մի ժիր առվակ։ Ավտոները սուլելով այս
ու այն կողմն եյին վազվզում։

Աշոտիկը, Լենան ու Մացոն կանգնել ու նայում
եյին ծառերից թափվող գույնզգույն տերմներին։

— Ո՞ւշ ե, գնանք, — ասաց Լենան։

Յեկ նրանք յերեքով ել արադ քայլերով ուղղվե-
ցին դեպի դպրոց։

Տրամվայն անցավ գոռդոռոցով ու զնդզնդոցով։
Փողոցը թարմացավ։

Աշոտիկը հանկարծ սկսեց վագել։

— Ի՞նչ ես անում, Աշոտիկ, ի՞նչ ես անում։ Զե՞
վոր դու պիոներ ես։ Զե՞ վոր դու խոսք ես տվել
տրամվայի պոչից չկապէլ, — յետեկից գոռացին։ Լենան
ու Մացոն։

Աշոտիկը վազեց, վազեց, ուզեց վոտը դնի տրամ-
վայի աստիճանի վրա, բայց չկարողացավ, ընկալ...

Ել չիմացավ Աշոտիկը, թե ինչպես միլիցիոները
տրամվայը կանգնեցրեց, շտապ ողնության ավտոն

կանչեց, իրեն գրկեցին, ավտոյի մեջ դրին, տարան
չիվանդանոց, պառկեցրին սեղանի վրա, ձախ վոտը
կտրեցին...

2.

Պառկած եր Աշոտիկը հիվանդանոցում։ Նա
նիհարել եր, գունատվել։ Պառկել եր ու գլուխը վեր-
մակով ծածկել։

Մահճակալի մոտ, աթոռի վրա, նստած եր մայ-
րիկը։

— Աշոտիկ' կ ջան, յերեսդ բաց արա, յեկել եմ
քեզ տեսնելու։

Պատասխանի փոխարեն լսվեց Աշոտիկի խուլ հե-
կեկոցը։

Մայրը, սիրո տալով իրեն, հանգստացնում եր
Աշոտիկին։

— Լաց մի՛ լինիր, բալես, քեզ հենակներ կտան,
քեզ համար վոտ կպատրաստեն, դու ելի ման կզաս,
գպրոց կհաճախես...

— Բայց գպրոցի յերկար սանդուխքով ի՞նչպես
պետք ե բարձրանամ...

Ասաց Աշոտիկն ու կրկին հեկեկաց։

— Կսովորես, կբարձրանաս, բալե՛ս։ Բավական
ե, Աշոտիկ, լաց մի՛ լինի, — ասաց մայրիկը և թաշ-
կինակով սրբեց իր աչքերը։

«Ախր ինչո՞ւ չլսեցի ընկերներիս, ինչո՞ւ ցատկե-
ցի արամվայի վրա»... — մտածում եր Աշոտիկն ու
հառաչում։

3.

Հիվանդանոցի ընդունելության որը Լենան ու
Մացոն գնացին Աշոտիկին տեսնելու։

Նրանք իրենց ընկերով չամար ինձոր, կանֆետ
ու մանդարին եյին բերել։

Ընկերներին տեսնելով, Աշոտիկը տիսրեց։

— Ինչո՞ւ յես տխուր, Աշոտիկ, — Հարցը էց Լենան:

— Ի՞նչպես չտխրեմ... Ինչո՞ւ յես ձեղ չլսեցի, ինչո՞ւ ջոկատին տված ազնիվ պիոներական խոստումս չկտարեցի... Յես վատ պիոներ եմ, յես անկարգապահ եմ...

— Ավելորդ են այժմ այդ խոսքերը, Աշոտիկ: Դու մի՛ հուզվիր, հանդիստ յեղիր, վոր չուտ առողջանաս, դպրոց գաս, — ասաց Մացոն:

— Մենք քեզ կողնենք, Աշոտիկ: Քեզ հետ կպարապենք, վոր հասնես մեզ, — ավելացը էց Լենան:

Գնալու ժամանակն եր:

Մացոն ու Լենան վեր կացան, ցտեսություն ասացին ու դուրս յեկան:

Աշոտիկը յերկար նայեց նրանց յետելից, խոր հառաչեց և աչքերը լցվեցին արտասուքով:

4.

Անցավ նախշուն աշունը, անցավ ծերուկ ձմեռը: Յեկավ յերիտասարդ ու թարմ գարունը:

Մայիսի մի գեղեցիկ տուավոտ եր:

Կրկին մայթերով շտապ քայլերով անցնում եյին քաղաքացիք — կին ու տղամարդ, ծեր ու յերիտասարդ:


Աշոտիկը, Լենան ու Մացոն դպրոց եյին գնում:

Աշոտիկը հենակներով եր, ման գալ նոր եր սուվորել, գանդաղ եր գնում:

Գուգոսցով ու զնզնդոցով անցավ տրամվայը:

Աշոտիկը յերկար նայեց անցնող տրամվայի յետելից, ապա իր ընկերների գեմքին...

Մացոն ու Լենան հատկացան, թե ինչ հիշեց Աշոտիկը...



— Ուռա՛, Աշոտիկը յեկավ, Աշոտիկը յեկա՛վ, —
դոռացին յերեխաները և չրջապատեցին Աշոտիկին:

Յեկան նաև Աշոտիկի դասղեկավարը և ջոկատավարը:

Աշոտիկը, վորմինչև այդ ժպտում եր, մռայլեց,
հազեվ զսպելով արցունքները, գրկեց իր ջոկատավարին և ասաց.

— Յես վաս պիոներ եմ, ընկեր Զավեն, ջոկատին
տված ազնիվ խոսքս չկատարեցի... .

— Քեզ հետ պատահած դժբախտությունից հետո
մեր ջոկատի պիոներներից վոչ մեկը չի խախտել
յերթեկության կանոնները, — Հանդստացնում եր Ա-
շոտիկին ջոկատավար Զավենը:

Վ. ԳՈՒՄԵՎ,

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՅԵՐԳԸ

Այսոր մենք ահա ուրախ մեր յերգով
Գնում ենք կարմիր դըրոշի ներքո
Մեր նոր դպրոցը արձակ ու ազատ,
Մեր տունը ահա ուրախ, լուսառատ:
Զավոդի, հանդի մանուկներ ենք մենք,
Յեվ պարզ ու պայծառ ճանապարհ ունենք:

Մանկության համար յերջանիկ, ազատ,
Շընորհակա'լ ենք, յերկի'ր հարազատ:

Կելնենք քարտեզի, տախտակի առաջ,
Կըվագենք դահլիճն այն լուսաճաճանչ:
Յեվ կը սովորենք այնպես, վորպեսզի
«Շատ լավ, յերեխեք» — Ստալինն ասի:
Զավոդի, հանդի մանուկներ ենք մենք,
Յեվ պարզ ու պայծառ ճանապարհ ունենք:

Մանկության համար յերջանիկ, ազատ,
Շընորհակա'լ ենք, յերկի'ր հարազատ:

Մենք կճանաչենք հեռու յերկրներ,
Կուսումնասիրենք կազմը աշխարհի:
Յեվ կաճենք, վորպես քաջ կապիտաններ,
Նավեր կվարենք ծովում անվեհեր:
Յեվ հանդիպելով բուքի, մենք կասենք—
ի՞նչ կա վոր... պայծառ ճանապարհ ունենք:

Մանկության համար յերջանիկ, ազատ,
Շընորհակա'լ ենք, յերկի'ր հարազատ:

Հերոսները մեղ կլինեն որինակ:
Ուզում ենք լինել խիզախ, համարձակ:
Կաճենք կըթոչենք ստրատոսֆերան—
Հանդարտ, ժպիտով, ամպերի վրան;
Յեվ բարձրանալով կընայենք, կասենք,—
Ի՞նչ կա վոր... պայծառ ճանապարհ ունենք:

Մանկության համար յերջանիկ, ազատ,
Շընորհակա'լ ենք յերկի'ր հարազատ:

Մեր հոկտեմբերյան դրոշակն ահա
Խրել թշնամուն յերբեք թույլ չենք տա:
Մենք բոլցիկներ կըլինենք արի,
Պատրաստ կըլինենք մենք նոր պայքարի:
Հերթափոխության կը գնանք, կասենք—
Ի՞նչ կա վոր... պայծառ ճանապարհ ունենք:

Մանկության համար յերջանիկ, ազատ,
Շընորհակա'լ ենք, յերկի'ր հարազատ:

Թարգմանեց Գ. ՍԱՐՑԱՆ

ՅԵԼԵՆԱ. ԿՈՆՈՆԵՆԿՈ

ԿՈՊՏՈՒԹՅՈՒՆ

Դպրոցի հանդերձապահը խոսում եր այդեպանի
հետ, վորը յերկամյա կտպույտ ծաղիկներ եր բերել:

— Հրաշալի յե ձեր դպրոցը, — ասաց այգեպանը՝
կարմիր գեմքով, ուրախ աչքերով մի փոքրիկ ծերուկ:
Հոգիս փառավորվում է: Յես ու դու, մայրիկ, այս-
պիսի դպրոցում չենք սովորել:

— Լավ դպրոց ե, — պատասխանեց հանդերձա-
պահը, հոգնած, բարի գեմքով մի հասակավոր կին,
բայց յերեխաներն ուզզակի տանջում են ինձ: Նրանց
մասին հոգ են տանում, վոր լավ լինեն, բայց այդ բա-
նը մի՞թե գնահատում են նրանք: Կնոջ ձայնի մեջ
դառնություն կար:

— Պատիժ են, պատիժ. ամեն տեղ կեղտոտում
են, գծում: Անցյալ հնդորյակում մի արձան բերին
արձանը մատիտով խզրդեցին: Իսկ ի՞նչ կոպիտ են:
Յերբ վազում են հազնվելու, կարծես վողջ հանդեր-
ձարանը պիտի կործանեն: Գոռզուում են, շլացնում,
վերարկուն ձեռքիցդ խլում են: Հենց են ե լսում ես.
«Ե՛յ, դու: Ե՛յ, ինձ տուր»: Կարծես թե հին ժամա-
նակվա վաճառականներն են զոռում կառապանի վրա:
Յերեկ մեկն ինձ այնպես հրեց, վոր մինչեւ հիմա ձեռքս
ցավում է: Յես նրան ասում եմ. «Ամոթ չի՞, չարաճճի,
յես դիրեկտորին կզանգատվեմ»: «Ուեխող կապիր, —
պատասխանում ե նա, — ուզում ես, դատախազին
դանդատվիր»: Այնպես վիրավորական եր, ազնիվ
խոսք, վոր քիչ մնաց լաց լինեմ: Կինը հուզվեց:
— Իսկ դու մի վրդովվիր, մայրիկ, — հանգստաց-

նում եր նրան ուրախ ծերուկը, — ջահել են, խակ ենք Մենք վոր փոքրիկ եյինք, նույնպես չարություն էյինք անում: Չարություն անել սիրում են, բայց կայտառ են, սրամիտ: Մեր յերեխաները լավ յերեխաներ են: Թոռու 12 տարեկան ե, բայց գյուտարար ե: Այս մեքենայով, — ասում ե, — Տրոֆիմ պապի, մարդիկ պետք եռ ուղիոն զեկավարեն, իսկ վորեւ բան պատահելու դեպքում, բոլոր Փաշիստներին կկոտորենք: Իսկ հետո ասում ե: Տրոֆիմ պապի, ամբողջ յերկրում այնպիսի ծաղկեներ կցանենք, վոր դու յերգում ել չես տեսել:

— Յես ել եմ ասում, վոր լավ են, — համաձայնվեց Հանդերձապահը: Տոներին ներկայացում տվին: Ներկայացումը չափազանց լավ եր: Բայց հետո այն պատանին, վոր վոտանավոր եր կարդում, վերարկուն ձեռքից խլեց և հատակի վրա չպրտեց: Յես ասում եմ նրան. «Տղա՛, ինչո՞ւ յես վերարկուն հատակի վրա չպրտում, չե՞ վոր մայրիկը վող ե տվել, գնել»: — «Գրողը տանինրան», պատասխանում ենա: Միայն այս ես լսում նրանցից: Յեկ վոչ թե միայն տղաները — աղջիկներն ել են ասում: Զե՞, յես կարծում եմ, վոր այդ կոպտությունները ներել չե կարելի: Հենց իրենց համար վնասակար ե:

— Ճիշտ եք ասում, — անսպասելի կերպով լսվեց տղամարդու մի խոպոտ ձայն:

Կինն ու ծերուկն իրար նայեցին: Սյունի մոտ կանդնած եր մի մարդ սահմանապահի համազգեստով: Դա մի հրամանատար եր, վորը հեռավոր արևելքից արձակուրդ եր յեկել Մոսկվա: Դպրոցը հրավիրել եր նրան սիոներական հավաքույթի, վոր յերեխաներին պատժի ուղեկալի կյանքի մասին:

... Իսկ վերեւում այդ ժամանակ, զանգից մի քանի բոպե առաջ, վեցերորդ դասարաններից մեկում մի անախորժ դեպք եր կատարվում: Աշխարհագրության դասատու Սոֆյա Լվովնան դաս եր բացատրում: Կոստյա Պոկրովսկին ուսուցչուհու բացատրությունը

չեր լսում, գիրք եր կարդում: Ուսուցչուհին այդ նըկատեց:

— Կո՞ստյա, գիրքը ծածկիր, դու չե՞ս լսում, — հանդիմանորեն ասաց նա:

Կոստյան մի վայրկյան գիրքը ծածկեց, հետո ելի սկսեց կարդալ: Գիրքը տուր ինձ, — ասաց ուսուցչուհին:

— Վերցնում եք, վերցրեք: Վերցրեք կերեք: Կպել եք ինձ, — կոպտորեն գոռաց զպրոցականը և գիրքըն այնպես շպրտեց, վոր քիչ եր մնում դիպչեր տարիքավոր ուսուցչուհու յերեսին:

— Դասարանից գո՞ւրս արի, — հուզմունքից դողացող ձայնով ասաց ուսուցչուհին:

— Դուրս կդամ, հլա մի սրան տես: Բարկանում ել ե, — անպատկառորեն, ավելի կոպիտ գոռաց յերեխան: Իսկ ի՞նչ կարող եք անել ինձ: Այժմ ցարական ժամանակը չե:

Նա դանդաղորեն, տատանվելով դեպի դուռը գընաց:

Վրդովվեցի՞ն արդյոք կոստյայի վարմունքից նրա ընկերները: Վո՞չ, նրանցից շատերը հիացմունքով եյին նայում նրան: ... Դասերից հետո պիոներները հավաքվեցին պիոներական սենյակը: Այստեղ նրանք պետք ե հանդիպում ունենային սահմանապահին հետ:

Սահմանապահին հանդիպեցին, թերմ ծափահարություններով: Նրա վրա նայում եյին ագահաբար, սիրով: Աշխարհագրության դասի ժամանակ տեղի ունեցած անախորժ դեպքը մոռացվեց: Զեր մոռացել միայն սահմանապահը, վորին ուսուցչուհին պատժել եր:

— Վո՞չ, յերեխաներ, մեր ուղեկալի կյանքի մասին յես չե՞մ պատժի, անսպասելի կերպով ասաց սահմանապահը:

— Ինչո՞ւ, ինչո՞ւ, — լսվեց պիոներների ձայնը:

— Են ավելին... — շարունակեց հրամանապա-

րը,— յես կվերադառնամ ուղեկալը և կպատմեմ ընկերներիս, վոր այն դպրոցում, վորի հետ մենք մտերմական գրադրություն ունեյինք, սովորում են ազնրվականների վորդիների նման մեծամիտ, կոպիտ յերեխաներ։ Յեվ այսուհետև մեզ այլևս նամակներ չգրեք։ Գիշերլա պահակությունից վերադառնալուց հետո, մենք կարդում եյինք ձեր նամակները և ուրտանց ուրախանում։ Ահա թե ինչպիսի լավ յերեխաներ են աճում, — մտածում եյինք մենք, — ամուր փոխարինողներ կունենանք… իսկ դուրս ե գալիս, վոր դուք խոսքով եք միայն ամուր…

Այն, ինչ վոր ասաց հրամանատարը, այնքան խիստ եր ու սարսափելի, վոր յերեխաները մինչև անդամ վախեցան։ Սենյակում լուսություն տիրեց։

— Վո՛չ, վո՛չ, ճիշտ չե, — հուզմունքից հնչուն ձայնով բացականչեց մեկը։


— Վո՛չ, ճիշտ ե, — խստորեն ասաց հրամանատար։ Իսկական խորհրդային յերեխաները գիրքն ուսուցչուհու յերեսին չե՛ն շպրտի։ Կոպտություն, խուլգանություն չե՛ն անի։ Իսկական խորհրդային յերեխաները դպրոցի տեխնիկական աշխատակիցներին չե՛ն վիրավորի, պատերի վրա զզվելի բաներ չե՛ն գրի։

Հրամանատրի բառերը ցավ պատճառեցին յերեխաներին։ Ինչ վոր ասում եր հրամանատարը, ճիշտ եր։ Բայց մինչև այժմ նրանից վոչ մեկի մտքովն անդամ չեր անցել, վոր իրենք իրենց պահում են այն մարդկանց նման, վորոնք միայն խոսքով են լավ։

Յերեխաները նստած եյին հանգիստ, ամոթահար։

… Այս անկեղծ խոսակցությունը տեղի ունեցավ նորակառույց դպրոցներից մեկում։ Սակայն այն կոպտությունը, վորի մասին մենք պատմեցինք, դժբախտաբար, միայն այդ դպրոցի աշակերտներին չե հատուկ։

Յերեխաների խոսակցության մեջ կան այսպիսի խոսքեր. «գնա՛ կորի», «սրիկա՛», «ե՛յ, դո՛ւ» և այլն։ Այսպիսի (և ավելի վատ) խոսքեր գործածելը շատ



դպրոցականներ յուրատեսակ քաջություն են համարում:

Վեցերորդ դասարանի մի պիոներ աշակերտ դասի ժամանակ չարություն եր արել և ուսուցչին վերավորել: Իրեն արդարացնելու համար, նա դպրոցի դիրեկտորին ասաց.

— Յես ջղային եմ: Ինչո՞ւ յե նա ինձ նկատողություն անում: Այժմ գիմնազիա չկա:

Այդ աշակերտի ստախանովական մայրը յեկավ դպրոց, լաց յեղավ, ներողություն ինդրեց, գանդատվեց.

— Ի՞նչ անեմ: Նա ինձ ել ե սատանայի մոտ ուղարկում:

Մանկավարժներին փողոցում բարեկելը շատ յերեխաներ ավելորդ են համարում: Քաղաքավարի լինելուց... ամաչում են: Ուսուցչուհու թաշկինակն ընկել ե հատակին: Վերցնե՞լ: Վո՞չ մի կերպ: Բայց ահա մեկը թաշկինակը վերցրեց, իսկ հետո այդ աշակերտին ծաղրեցին:

— Քծնո՞ւմ ես: Ա՛յ դու դժբախտ շողոքորթ:

Իսկ շատ յերեխաներ ինչպե՞ս կոպիտ են պահում իրենց փողոցում: Ահա հիանալի հագնված, ուրախ, սոսող մի յերեխա փորձում ե կպչել ավտոբուսի պոչին: Յերեխայի մի ձեռքին նոտաների թղթապանակն ե. յերեխ յերաժշտություն ե սովորում: Միլիցիոները, պատկառելի տարիքով մի մարդ շատ քաղաքավարի կերպով ասում ե.

— Այդպես չի կարելի: Ուզում ես առանց վոտի՞մնալ:

— Զհանդամվի՞ր, — գոչում ե «պատանի յերաժիշտը», գեմքը ծոմուռմ ու հեռանում:

Մի կույր տղամարդ խնդրում ե 13-14 տարեկան յերկու աշակերտուհների, վոր իրեն ճանապարհի մյուս կողմն անցկացնեն: Աշակերտուհները հրեցին կույրին, հոհուացին, ծլկվեցին: Հետո մի կողմում կանգնած նայեցին, թե ի՞նչ պիտի անի կույրը:

Մենք աշակերտուհներին հարցրինք.

— Ինչո՞ւ դուք կույրի խնդիրը մերժեցիք:

— Ա՛յ քեզ բան: Նրա հետ ճանապարհ գնալն ամոթ ե, — փոթկացրին աղջիկները:

Պիոներների համար կույրին ոգնելն ամոթ ե: Իսկ նրան հրելն՝ ամոթ չե:

Տրամվայներում, ավտոբուսներում վոքրահասակ գպրոցականները հրում են ճանապարհորդներին, վոր շուտով մանկական տեղերը գրավեն: Իրենց տեղերը զիջեն մի պառավի կամ յերեխա գրկած կնոջ: Վո՞չ մի կերպ: Ահա մի տարիքավոր կին: Նա հազիվ վոտի վրա կանգնում. յերկու ձեռքին ել ծանր կապոցներ կան: Թվում ե, թե 12 տարեկան առողջ, կարմրաթուշ պիոներն ինքը պետք ե ուլսի ընկնի և իր տեղն այդ կնոջը զիջի:

Վո՞չ:

— Տղա՛, տեղդ այդ կնոջը զիջիր, — ասում են պիոներին:

— Սա մանկական տեղ ե, — անվրդով պատասխանում ե գպրոցականը և յերեսը դեպի պատուհանը դարձնում:

Դպրոցականների կոպտության մասին պետք ե խոսեն իրենք, կոմյերիտականները և գպրոցի պիոներները: Առանձին յերեխաների կոպիտ, խուլիզանական արարքները պիոներական հավաքույթներում, աշակերտական ժողովներում չեն քննարկվում, կոպիտ յերեխաների մասին պատի թերթերում չեն գրում, ընկերներն այդպիսի յերեխաներին իրենց ատելությունը չեն հայտնում, չեն դատապարտում նրանց, այլ, ընդհանուրակը, նրանց անվանում են «քաջ»: Մեծահասակ դպրոցականները փոքրահասակներին չեն արգելում:

Սահմանապահը արդարացի յեր, վոր կոստյագոկովսկու վարքը գնահատում եր վորպես վոչ-խորհրդային մարդու գործ: Վոչինչ, վոր այդ մարդը 13 տարեկան ե: Նա պիոներ ե: Հենց նա և իր հասա-

կակիցները պետք ե լինեն մեր Սոցիալիստական Հայրենիքի տերերը, այն Հայրենիքի, վորն այնպես խնամում, պահպանում, փայփայում, աճեցնում ենք:

Ուշադրությամբ նայեցեք ձեզ և իրար, ընկեր պիոներներ: Դուք յերազում եք տիրել միջպլանետային տարածությունը, դուք յերազում եք Հերոսական սխրագործությունների մասին, դուք ցանկանում եք հնարել մինչև այժմ չտեսնված մեքենաներ, սովորում եք գիտուկ կրակել, ջութակ եք նվազում: Սա շատ լավ է: Մեր յերկիրը հիանալի յերեխաներով հարուստ է:

Այնուամենայնիվ ձեզանից վոմանք կոպիտ են, սահմարձակ: Նայեցեք նրանց վրա: Ման են դալիս որորվելով, հրում են սրան, նրան, հայհոյում են, թքոտում... Բայց չե՞ վոր այդ յերեխաներից շատերը յերազում են Խորհրդային Միության հերոսների, յերկրի լավագույն մարդկանց նման լինել:

Նրանք պետք ե գիտենան, վոր խուլիզանությունը, կոպտությունը, անկարգապահությունը, իրենցից հասակավորներին չհարգելը, իրենց իղձերի իրագործմանը կիսանդարի: Իրենց վողջ կյանքում խանդարիչ կհաղիսանա:

Ասացեք նրանց, վոր իրենց վարքով խայտառակում են ձեզ, խայտառակում են խորհրդային յերեխաներին, վորոնցով իրավամբ պարծենում ե մեր Հայրենիքը:

Թարգման. ռուսերենից („Պիոներսկ. պարա“)

30103206

Յ Ե Բ Ե Խ Ա Ն Ե Ր

Հիշեցեք վողոցային յերթեվեկության կանոնները.

1. Գնա միմիայն մայթերով:

2. Փողոցն անցիր խաչաձեռղ տեղերից, վոտքով անցնելու համար նշված արահետով, վորտեղ ցույց ե տրված «Անցում», կամ «Սպիտակ քարուղի» կա: Այնտեղ, վորտեղ լուսարձակ կա, սպասիր կանաչ աղբանշանին: Ուշադրությամբ հետեւիր այն ալտոներին, վորոնք անցնում են աջ կամ ձախ կողմից:

3. Փողոցն անցիր ուղիղ գծով առանց շեղվելու: Նախան մայթից գուրս գալը, նայիր դեպի ձախ ու աջ, փողոցն անցնելիս միշտ դիտիր չուրջդ: Ճանապարհը մի անժնիր՝ նախքան ավտոն անցնելը. կանգնիր, առանց սպասելու աղբանշանին: Թող անցնի ավտոն, հիշիր, վոր ավտոն չի կարող միանդամից կանգնել. Հատկապես զգուշացիր ավտոյից խոնավ յեղանակին:

Առանձնապես զգույշ յեղիր կանոնած տրամվայի կամ ավտոյի յետեւից փողոց գուրս գալուց:

4. Տրամվային, ավտոներին (ավտոբուսին) գնացքներին սպասիր կայանի դիմաց գտնվող մայթի կամ հրապարակի վրա:

5. Ներս չմտնել, գուրս չգալ և դռները բաց չանել մինչեւ ամբողջովին չկանգնի տրամվայը, ավտոբուսը, ավտոն: Դուրս գալու ժամանակ անսպայման յետ նայիր:

6. Խաղեր մի սարքիր խճուզու վրա:

7. Մի ցատկիր տրամվայների, ավտոների վոտնակների և բուֆերների վրա: Մի կաչիր ավտոների, սայլերի յետեւից, թույլ մի տա այդ անել նաև քո ընկերներին:



ԲԻԼՈՒԵԿԱ
Ակադեմիական
Վ. Բ. Հ. Հ.

Պատ խմբագիր՝ Մ. Դուրզարյան
Տելու. խմբագիր՝ Ան. Գասպարյան
Սրբագրիչ՝ Հ. Մանուկյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

1. ՀԼԿՅՑԵՄ ԿԵՆՏԼՈՒՄԻ և ՀԽՍՀ ԼՈՒԺԱՊՂԿՈՒՄԱՄԻ ԿՈՂՄԻց.	3
2. Ա. Ստալոկի — ՅԵՐԵՒԱՆԵՐ.	5
3. Տ. ՊԵՐԵԼԻԳԻՆ — ԸՆԿԵՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ.	7
4. Վ. ԶԿԱԼՈՎ — ԱՄԷՆ մի համարձակություն աղնիլ գործ չե	8
5. Գ. Մանտոյան — Բաց նամակ իմ ընկերներին	12
6. Վ. Մայակովսկի — Ինչն է լավ, և ինչը՝ վատ	14
7. Հ. Հայրապետյան — Խոստումու չկատարեցի	18
8. Գուսեվ — Խորհրդային դպրոցականների յերգը	23
9. ՅԵ. Կոնոնենկո — Կոպտություն	25
10. Փողոցի յերթևեկության կանոնները	33

Գլուխիսի լիազոր՝ Ա — 4018. Հրատ. 4684.

Պատվեր 576, Տիրաժ 3500

Թուղթ 62×94. Տպագր. $1\frac{1}{4}$ մամ.

Եկէ մամ. 24,480 նշան.

Հանձնված և արտադրության 3 հունիսի 1938 թ.

Ստորագրված և տպագրության 29 հունիսի 1938 թ.



ՀՀ Ազգային գրադարան

NL0387574

411

№1205

3492

ԳԻՒԸ 80 Կ.



БУДЬ ИСПРАВНЫМ
И СОЗНАТЕЛЬНЫМ

ГИЗ АРМ. ССР. ЕРЕВАН

нар. фр.